ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 478

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 91 որոշման, հիմք ընդունելով Սյուզաննա Միքաելյանի կողմից ներկայացված դիմումը, «ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից մշակված աշխատանքային նախագիծը, որոշում եմ.

1.ՀՀ Երևան քաղաքի բնակիչ Սյուզաննա Միքաելյանին տալ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 12-րդ փողոց թիվ 15 հողամաս հասցեում 2-րդ ռիսկային աստիճանի բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:

2.Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021թ. 12 06
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 479

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Շահինյանի դիմումը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի 06-027-0002-0010 ծածկագրի տնամերձ հողամասին՝ իր շենք շինություններով տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Գարգառ, 8-րդ փողոց, թիվ 11 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

20 21թ. 12 06
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 480

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «*Տեղական ինքնակառավարման մասին*» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշում եմ.

Գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ 2021թ. դեկտեմբերի 09-ին ժամը 15:00-ին համայնքապետարանի վարչական շենքում հետևյալ օրակարգով՝
1.Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ դեկտեմբերի 09-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2.Գյուլագարակ համայնքի 2021թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 12 08
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 481

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԴԵՆԴՐՈ ԳԱՐԴԵՆ» ՓԲԸ դիմումը, հողամասի սեփականության իրավունքի թիվ 25022021-06-0020 վկայականը, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 17.09.2009 թ.-ի թիվ 1066-Ն որոշման 7-րդ կետով, ՀՀ Կառավարության 03.07.1997 թ.-ի թիվ 237-Ն որոշմամբ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2016 թվականի նոյեմբերի 21-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ «ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ» ԴԱՍԱԿԱՐԳԻՉ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1234-Ն հրամանով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝

1.«ԴԵՆԴՐՈ ԳԱՐԴԵՆ» ՓԲԸ սեփականություն հանդիսացող 06-027-0183-0121 ծածկագրի 1,2353 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողի գործառնական նշանակությունը ցածրարժեք հողատեսքից փոխել բարձրարժեքի, այն է՝ բազմամյա տնկարկ (ընկուզապտուղ,տխիլ) գործառնական նշանակության (տնկարկի դասակարգիչ 5214):
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԽԱՉԻԿ ԳԱՐԴԱՆՅԱՆ**

20 21 թ. 12 08
գ.Գյուլաձարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 482

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, Գյուլագարակ համայնքի ավագանու 27.08.2020 թվականի թիվ 60 որոշումը, համայնքապետարանի աշխատակազմի աճուրդային և մրցութային հանձնաժողովի թիվ 29 արձանագրությունը, որոշում եմ.

2021թ. դեկտեմբերի 06-ին Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի աճուրդային-մրցութային հանձնաժողովի կողմից անցկացված մրցույթում հաղթող ճանաչել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի բնակիչ Սեյրան Ռուբենի Բալայանը, ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 06-027-0176-0011 կադաստրային ծածկագրի, 0,22165 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի նկատմամբ, տարեկան 5000 /հինգ հազար / ՀՀ դրամով, 25 տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԽԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2021 թ. 12 08
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 483

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ,ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-029-0015-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԱՐԳԻՍ ՄԱՏԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ,ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Մատինյանի կողմից լիազորված անձ Արթուր Միանասյանի կողմից ներկայացված դիմումը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 8-րդ և 16-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ *հոդվածներով*,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ ՝ որոշում եմ.

1.Վերականգնել Գյուլագարակ *համայնքի* Գյուլագարակ *գյուղի* 06-029-0015-0001 ծածկագրում գտնվող 1675.6 քմ բնակելի կառուցման հողամասի հողահատկացման հիմքերը՝ ա/ Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0015-0001 ծածկագրի հողմասի մակերեսը 1675.6 քմ բ/ հողմասի սահմանները և հատագիծը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված 1675.6 քմ հողմասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Սարգիս Մատինյանի:

3. Սարգիս Մատինյանի կողմից Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0015-0001 ծածկագրում գտնվող, այլ անձաց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հակադիր սերվիտուտ չառաջացնող՝ 1991 թվականին կառուցված 22,20 քմ անավարտ բնակելի տան նկատմաբ Սարգիս Մատինյանի սեփականության իրավունքը:

4.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0015-0001 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Գյուլագարակ, 7-րդ փողոց, թիվ 16:

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021 թ. 12 08
գ.Գյուլագարակ